ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

0010 ք. Երևան, Կորյունի 17

N - Ն-7235

«19» հոկտեմբերի 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Միրզոյան,

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 166-րդ հոդվածի 3-րդ մասի և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 143-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորի թափուր տեղում ընտրելու համար առաջարկվում են Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընտրված՝ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի նախագահ Արսեն Սամվելի Մկրտչյանի, Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ Սամվել Լևոնի Գրիգորյանի, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Մերուժանի Հայկյանցի թեկնածությունները:

Կից ներկայացվում են Ա. Մկրտչյանի, Ս. Գրիգորյանի և Ա. Հայկյանցի վերաբերյալ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 134-րդ հոդվածի 6-րդ մասով, 143-րդ հոդվածի 3-րդ մասով և Ազգային ժողովի աշխատակարգով սահմանված փաստաթղթերի պատճենները:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորի թեկնածուներին Ազգային ժողովում կներկայացնի Բարձրագույն դատական խորհրդի նախագահը:

Առդիր՝ 113 էջ:

Հարգանքով՝

Ռ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-66-Ո-152
2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԴԱՏԱՎՈՐ ՆՇԱՆԱԿՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ԿԱԶՄԵԼՈՒ, ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020 թվականի հոկտեմբերի 15-ին, դռնփակ նիստում, քննարկելով Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակը կազմելու, հաստատելու և Ազգային ժողովին առաջարկություն ներկայացնելու վերաբերյալ հարցը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, 133-րդ հոդվածի 10-րդ մասով՝ Բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Կազմել և հաստատել Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակը՝ համաձայն հավելվածի:

2. Ազգային ժողովին առաջարկել սույն որոշմամբ հաստատված անձանց թեկնածությունները՝ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում դատավորի թափուր պաշտոնում ընտրելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

2020թ. հոկտեմբերի 15
ք. Երևան

Հավելված
Բարձրագույն դատական խորհրդի
2020թ. հոկտեմբերի 15-ի թիվ ԲԴԽ-66-Ո-152
որոշման

ՑՈՒՑԱԿ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԴԱՏԱՎՈՐ ՆՇԱՆԱԿՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ

N	ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ	ԾՆՆԴՅԱՆ ԹԻՎ, ԾՆՆԴԱՎԱՅՐ	ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ	ՊԱՇՏՈՆ
1.	ԳՐԻԳՈՐՅԱՆ Սամվել Լևոնի	1974թ. Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն	Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան	Նախագահ
2.	ՀԱՅԿՅԱՆՑ Արմեն Մերուժանի	1973թ. Գեղարքունիքի մարզ, գ. Ձորագյուղ	Բարձրագույն դատական խորհուրդ	Խորհրդի անդամի ժամանակավոր պաշտոնակատար
3.	ՄԿՐՏՉՅԱՆ Արսեն Սամվելի	1973թ. ք. Երևան	Վերաքննիչ քաղաքացիական դատարան	Նախագահ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԱՌԱՋԱԴՐՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 166-րդ հոդվածը և «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 16.12.2016 թվականի որոշման հավելվածի 95-րդ կետը՝ տալիս եմ իմ համաձայնությունը Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորի պաշտոնում առաջադրվելու վերաբերյալ:

Ընտրվելու դեպքում վայր եմ դնում Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի նախագահի և Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորի լիազորությունները:

ԱՐՄԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

Ազգանուն, անուն, հայրանուն	Մկրտչյան Արսեն Սամվելի
Ծննդյան տարեթիվը, ծննդավայրը	09.10.1973թ., ք. Երևան
Կրթությունը, ինչ է ավարտել և երբ	Բարձրագույն, «Գլաձոր» կառավարման համալսարանի միջազգային իրավունքի ֆակուլտետը՝ 1996թ.
Մասնագիտությունը	Իրավագիտություն
Մասնագիտական ստաժը	21 տարի
Դատավորի ստաժը	10 տարի
Աշխատանքի վայրը	Վերաքննիչ քաղաքացիական դատարան
Զբաղեցրած պաշտոնը	Դատարանի նախագահ
Ընտանեկան դրությունը	Ամուսնացած
Քանի երեխա ունի	3 երեխա

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

1990-1993թթ.	Օպերայի և բալետի ակադեմիական թատրոն, համակարգչային օպերատոր
1994-1997թթ.	Օպերայի և բալետի ակադեմիական թատրոն, համակարգչային օպերատոր
1997-1999թթ.	«Թերմելե» կոոպերատիվի նախագահի տեղակալ
1999-2000թթ.	Հայսպառմիության Երևանի իրավատնտեսագիտական և կառավարման քոլեջի տնօրենի օգնական, քաղաքացիական և ընտանեկան իրավունքի առարկաների դասախոս
2000-2001թթ.	Տնտեսական գործերով վերաքննիչ դատարան, դատարանի նախագահի օգնական

04.2001-10.2001թթ.	Տնտեսական գործերով վերաքննիչ դատարան, գրասենյակի պետ
2001-2005թթ.	Տնտեսական դատարան, նախ՝ գրասենյակի պետ, ապա՝ աշխատակազմի ղեկավար
2005-2006թթ.	Վճռաբեկ դատարանի աշխատակազմի ղեկավար, ապա՝ նույն դատարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ՀՀ դատարանների նախագահների խորհրդի քարտուղար
01.2006-09.2006թթ.	Վճռաբեկ դատարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ՀՀ դատարանների նախագահների խորհրդի և Արդարադատության խորհրդի քարտուղար
2005 – 2014թթ.	ՀՀ դատական դպրոցում վերապատրաստող
2014թ.	ՀՀ-ում Ֆրանսիական համալսարանի դասախոս
2014 – 2018թթ.	ՀՀ արդարադատության նախարարության Իրավաբանական ինստիտուտ ՊՈԱԿ-ում դասախոս
2014թ. – առ այսօր	ՀՀ արդարադատության ակադեմիայում դասախոս
2014թ. – առ այսօր	ՀՀ փաստաբանական դպրոցում դասախոս
2014 – 2016թթ.	ՄԱԿ-ի Միջազգային առևտրի հանձնաժողովի աշխատանքային խմբում ՀՀ Կառավարության ներկայացուցիչ
09.2006-2007թթ.	Վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդական
2007-2008թթ.	Դատական դեպարտամենտի ղեկավար
08.2008-05.2014թթ.	Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր
05.2014-06.2014թթ.	Արդարադատության նախարարի տեղակալ

06.2014-09.2016թթ.	Արդարադատության նախարարի առաջին տեղակալ
2017թ. – առ այսօր	Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի պետական քննական հանձնաժողովի անդամ
2017 – 2018թթ.	Եվրոպայի խորհրդի փորձագետ
22.09.2016-17.05.2018թթ.	Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր
17.05.2018թ.-ից առ այսօր	Վերաքննիչ քաղաքացիական դատարանի նախագահ:

«16» հոկտեմբերի 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՐՍԵՆ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սահմանադրության 139-րդ հոդվածի 1-ին մասը, 166-րդ հոդվածի 7-րդ մասը, ինչպես նաև Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի մայիսի 3-ի ԲԴԽ-6-Ո-7 որոշմամբ ներկայացված առաջարկությունը.

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Արսեն ՄԿՐՏՉՅԱՆԻՆ նշանակել վերաքննիչ քաղաքացիական դատարանի նախագահ:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

2018թ. մայիսի 17
Երևան
ՆՀ-321-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի ՆՀ-137-Ա ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 11-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 144-րդ հոդվածի 5-րդ, 148-րդ հոդվածի 6-րդ մասերը և Արդարադատության խորհրդի 2016 թվականի սեպտեմբերի 9-ի ԱԽ-19-Ո-16 որոշմամբ ներկայացված առաջարկությունը, ինչպես նաև հաշվի առնելով Արդարադատության խորհրդի 2016 թվականի սեպտեմբերի 9-ի ԱԽ-19-Ե-21 եզրակացությունը՝ ո ր ո շ ու մ է մ.

1. Լիլիթ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ նշանակել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր՝ դադարեցնելով նրա՝ Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի դատավորի լիազորությունները:

2. Արսեն ՄԿՐՏՉՅԱՆԻՆ նշանակել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Նախագահի 2011 թվականի հուլիսի 23-ի «Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար ծառայողական առաջխաղացման ցուցակը հաստատելու մասին» ՆՀ-137-Ա հրամանագրի 1-ին կետով հաստատված հավելվածի՝ Քրեական մասնագիտացման բաժնի 3-րդ կետը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Ս.ՍԱՐԳՍՅԱՆ

2016թ. սեպտեմբերի 22
Երևան
ՆՀ-1043-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԱՏԱՎՈՐ Ա. ՄԿՐՏՉՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 95-րդ հոդվածի 5-րդ, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 167-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետերով և հաշվի առնելով Արդարադատության խորհրդի 2014 թվականի մայիսի 6-ի առաջարկությունը՝ որոշում եմ.

2014 թվականի մայիսի 7-ից դադարեցնել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Արսեն ՄԿՐՏՉՅԱՆԻ լիազորությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

2014թ. մայիսի 6
Երևան
ՆՀ- 104 -Ա

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԻ ԴԱՏԱՐԱՆ
07.05.14թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

Ա. ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 11-րդ կետով և հիմք ընդունելով Արդարադատության խորհրդի 2008 թվականի հուլիսի 31-ի «Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր նշանակելու համար թեկնածություն ներկայացնելու վերաբերյալ» եզրակացությունը՝ ո ր ո շ ու մ ե մ.

Արսեն ՄԿՐՏՉՅԱՆԻՆ նշանակել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

2008թ. օգոստոսի 6
Երևան
ՆՀ- 210 -Ա

ՀՀ ՀԵՂԱՓԽԻՐ ԴԱՏԱՐԱՆ
ՄՈՒՏՔԻ No ԱՀ 859
ԱՄՍԱԹՎ 07.08.08թ.

67